

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՔ ՍԻՆՕԴԻ

Ի հետևումն գրութեան Գլխաւորապէս Հոգաբարձուի Կովիտեան Ուսումնարանական շրջանի, Սինոդալ համաձայն օրագրութեան իւրոյ կայացելոյ ի 21-ն Մայիսի 1881 ամի, գրութեամբ ի 28-ն Մայիսի նոյն ամի № 1263, հաղորդեալէ ուսումնարանական Տեսչութեան, զի ի տօնական աւուրս յորս Հայաստանեայց Ս. Եկեղեցի պահէ կիրակէս, արձակել ի պարապմանց դասուց զհայազգի աշակերտս, ուսանողս յԱրքուհի ուսումնարանս, վասն գնալոյ ի Ս. Եկեղեցիս Հայոց և ներկայ լինելոյ Աստուածային անձո՛հ պատարագին, եւ տօնքն են այսօրիկ Ա. 5, 6, 7, և 13 Յունուարի տօնք Մննդեան, Յայտնութեան և Անուանակոչութեան Տեսուչ Յիսուսի Քրիստոսի: Բ. Փետրուարի 14 տօն Քառասորեայ Գալութեան Տեսուչ ի Տաճարն: Գ. տօն Արքայ Վարդանանց զօրաւորացն Հայոց: Դ. Ապրելի 7, տօն Աւետեայ Ս. Աստուածածնի: Ե. տօն Մարին ի վիրապն Սուրբ Գրիգոր Լուսաւորչին: Զ. տօն Երիցն ի վիրապէ Սրբոյն Գրիգոր Լուսաւորչին: Է. տօն Գլխաւորաց Ս. Գրիգոր Լուսաւորչին: Ը. տօն Սրբոց Թարգմանչացն Իսահակայ և Մեսրոպոսայ Հայրապետացն: Թ. տօն Սրբազան Առաքելոյն Թադէոսի և Սրբուհւոյ Սանդիսոյ կուսին: Ժ. տօն Սրբոց նախկին Լուսաւորչացն Հայաստանի Սրբազան Առաքելոյն Թադէոսի և Բարդուղիմէոսի: ԺԱ. Սեպտեմբերի 8 տօն Մննդեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ: ԺԲ. Նոյեմբերի 21 տօն Ընծայման Ս. Աստուածածնի ի Տաճարն: Եւ ԺԳ. տօն Յղութեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ: Եւ որպէս հասանի լուր Անդամոց Սինոդիս, ուսումնարանական վարչութիւնք, համաձայն հաղորդեալ ի Սինոդէս տեղեկութեանց, ի յատկացուցեալ աւուրսն արձակեն զհայ աշակերտսն ի դասուց, առ ի գնալոյ յեկեղեցի, սակայն՝ քահանայք Հայոց ի տեղիս տեղիս կից ընդ գիշերային ժամերգութեանց մատուցանեն զսուրբ պատարագն, որով հետեաբար աշակերտք գրկին ի տեսանելոյ զսուրբ պատարագն և ի հոգեւոր մխիթարութեանց. ուստի և ՀՐԱՄԱՅՆՅԻՆ. Առ ի չ'զրկելոյ զհայ աշակերտս, ուղանողս որպէս ի Հայոց դպրոցան, նոյնպէս յԱրքուհի ուսումնարանս, ի հագեկան մխիթարութեանց, այն է՝ ի լսելոյ զժամերգութիւնս Աստուածային պաշտամանց և Սրբազան պատարագի, շրջաբերական հրամանօք պատուիրել յիճակաւորաց Հայոց Ռուսաստանի և փոխանորդաց նոցին զի նոքա պատուէր տացեն քահանայից Հայոց եղելոց ի դիճակս իւրեանց ի վերոյիշատակեալ աւուրսն անխափան մատուցանել զպատարագ, ոչ կից ընդ գիշերային ժամերգութեանց, այլ առանձին. այն է՝ զմատուցումն պատարագի սկսանել միշտ ի 10-րդ ժամու ցերեկի, և ոչ յառաջ: Ի Դեկտեմբերի. 1885 ամի ի Ս. Էջմիածին:

Ստորագրեալ Սինոդիս Եպիսկոպոսունք, Վարդապետք, Քահանայք, և այլ հոգեւոր ատելճանաւոր անձինք, գտեալք յամենայն վիճակսն Հայոց Առևտատանի և ի վանօրայոյ, հակառակ արգելական տնօրէնութեանց Սինոդիս և առանց կանխագոյն ստացման հրամանի և թոյլատուութեան Հոգեւոր իշխանութեանս ինքնագլուխ մեկնեալք ի տեղւոջէ ծառայութեանց և ի պաշտամանց իւրեանց շրջին ըստ հաճոյս կամաց իւրեանց ի զանազան քաղաքս, գիւղօրայս և յայլ տեղիս վիճակաց և նահանգաց Առևտատանի և մինչ անգամ ինքնակամօրէն վստահանան առանց հրաւիրանաց կամ կոչման Ծայրագոյն Հոգեւոր իշխանութեանս դիմել ի Մայր Աթոռս՝ ի Ս. Էջմիածին: Ուստի և առ ի զառաջս առնելոյ այս օրինակ կանոնադանցութեանց նոցին և ինքնակամ շատաշրջութեանց, ՀՐԱՄԱՅՑԻՆ: Շրջաբերական հրամանագրութեամբք պատուիրել բոլոր վիճակաւոր Առաջնորդաց, Փոխնորդաց նոցին, վիճակային Կօնսիստօրիայից և Հոգեւոր Կառավարութեանց Հայոց Առևտատանի, զի պատուէր հրամանի արձակեսցին առ ամենայն գտեալ ի տեսչութեան իւրեանց Եպիսկոպոսունս, Վարդապետս, Արեւայոս, եղեալս ի վանօրայս վիճակի իւրեանց, քահանայս և այլ հոգեւորականս և խսախ արգելուլ զի նոքա առանց կանխագոյն խնդրելոյ և ստանալոյ ընդ ձեռն մերժուոր հոգեւոր իշխանութեան իւրեանց զհրաման և զթոյլտուութիւն ի Սինօգէս մի ընաւ վստահացին ինքնագլուխ մեկնիլ ի տեղւոջէ ծառայութեանց և պաշտամանց իւրեանց յոր և իցէ քաղաքս, գիւղս և յայլ տեղիս վիճակացն, կամ առանց ստանալոյ զթոյլտուութիւն դիմել ի Ս. Էջմիածին, նախագգուշացուցանելով զնոսա միանգամայն զի ո՞րք ի նոցունց եթէ վստահացի այսուհետեւ զանցանել զայսու պատուիրանաւ, Սինօգս ունի արկանել զայնպիսին ընդ պատժաւարտութեամբք ըստ քաղաքական և եկեղեցական կանոնաց: Ի Յունուարի 1886 տմիս ի Ս. Էջմիածին: